

## ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/3

24 հունվարի 2017թ.

Քննարկվեց «Վահե Գևորգյան» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 31.10.2016թ. թիվ 1817 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Վահե Գևորգյան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 13.10.2016թ. դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 42.973.850 դրամ: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կազմում է 42.973.850 դրամ, որից ապառք 36.456.890 դրամ, տույժ 6.516.960 դրամ, որն առաջացել է 2015թ. 4-րդ եռամսյակի և 2016թ. 2-րդ եռամսյակի հաշվարկներից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ «Վահե Գևորգյան» ՍՊԸ-ից չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ, որի մասին ընկերության տնօրենը 26.10.2016թ. պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 31.10.2016թ. ընդունվել է թիվ 1817/02 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) «Վահե Գևորգյան» ՍՊԸ-ից 42.973.850 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարի 21.04.2015թ. թիվ 5011685 հանձնարարագրի համաձայն «Վահե Գևորգյան» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 29.12.2015թ. թիվ 5011685 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 315.642.380 դրամ: Նշված ակտի դեմ ներկայացվել է վարչական բողոք, որի քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից ընդունվել է 23.02.2016թ. թիվ 7/3 որոշումը: Վերջինիս համաձայն ընկերության բողոքը մասնակի բավարարվել է: Ընկերությունը, համաձայն չլինելով Կենտրոնի ՀՏ 29.12.2015թ. թիվ 5011685 ակտի 3-րդ կետի և Հանձնաժողովի 23.02.2016թ. թիվ 7/3 որոշման հետ, վիճարկման հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան, որն ընդունվել է վարույթ և ներկայումս գործը գտնվում է քննության ընթացքում՝ վարչական գործ թիվ ՎԴ/1034/05/16:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Որոշմամբ ԱԱՀ-ի գծով գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են Ակտի 3-րդ կետով արձանագրված գումարի չափով ԱԱՀ-ի դեբետային մնացորդը նվազեցնելու

արդյունքում, ինչպես նաև այն, որ Ակտի իրավաչափության հարցը վիճարկվում է դատական կարգով, հետևապես սույն գործի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել, մինչև թիվ ՎԴ/1034/05/16 գործով վերջնական դատական ակտի ընդունումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

«Վահե Գևորգյան» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ